Հայոց լեզվի և /հայ / գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐԱՔՍՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ Հ.Ավետիսյանի անվան հ.74 հիմնական դպրոց

ԱՌԱՐԿԱ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ «Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց » ՊՈԱԿ

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ ԱՆԱՀԻՏ ՁՈՀՐԱԲՅԱՆ

Երևան 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշվում են արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

Մանկավարժական գիտության մեջ «արժեքային համակարգ» հասկացությունը ըմբռնվում է բավական լայն շրջագծով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Պայմանավորված ժամանակակից աշխարհում տեղի ունեցող ժողովրդավարական, տնտեսական, քաղաքական, հասարակական, մշակութային մի շարք իրադարձություններով՝ փոխվում են հասարակության զարգացման հիմքում ընկած կարևոր համակարգեր և ոլորտներ: Մարդկության զարգացման նոր միտումները հանգեցնում են անձի արժեքային համակարգի, վերաբերմունքի, վարքագծի, աշխարհընկալման փոփոխությունների: Եվ բնավ էլ գաղտնիք չէ, որ այսօր սովորողների արժեքային համակարգի ձևավորումը անմիջականորեն կապվում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետ: Նոր դարաշրջանում անդադար փոփոխվող ու զարգացող տեխնոլոգիաները, ծրագրերը, կրթական համակարգում տեղի ունեցող նորարարությունները առաջադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր աշակերտի: Եվ այս առումով մեծ դեր ունի ժամանակակից դպրոցը, որը ոչ միայն պիտի կրթի և դաստիարակի տնտեսական և քաղաքական օրենքներն ըմբռնող և հասկացող մարդ, այլև ձևավորի ազգային մտածողություն ունեցող քաղաքացի:

Ճիշտ է, երեխայի արժեքային համակարգը /պատկերացումները լավի ու վատի, չարի ու բարու մասին և այլն/ ձևավորվում է ընտանիքում, սակայն դպրոցը կրթական գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու դեպքում կարող է շատ բան փոխել և վերարժևորել:

Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ ես՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ընտրել եմ հենց այս թեման՝ «Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում», քանզի այն խիստ արդիական է և կարող է լուծել ժամանակակից

հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Այդ խնդիրներից են բարոյական, ազգային-հասարակական նորմերի ճիշտ արժևորումը, ազգային դիմագծի պահպանումը, նոր սերունդների գիտակցության մեջ այդ նորմերի ամրակայումը և դաստիարակության գործում դրանց կիրառումը:

Հենց այս ամենին էլ միտված է սույն աշխատանքը, որը նպատակ ունի բացահայտելու այն ուղին, այն ճանապարհը, որով ընթանալու դեպքում աշակերտների մոտ կձևավորվի արժեքային համակարգը:

Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, բարձր բարոյականության տեր, պատվախնդիր, իր հայրենիքը սիրող և արժևորող մարդու դաստիարակությունն է:

Եվ ուրեմն, արդի մանկավարժության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Եվ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի սա և հասկանա, որ մեծ և կարևոր առաքելություն ունի դրված իր ուսերին:

Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար անփոխարինելի նշանակություն ունեն ուսումնական բոլոր առարկաները, մասնավորապես գրականությունը:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում են սերը և ճշմարտությունը: Սեր՝ հայրենիքի, ազգի, հավատի, ընտանիքի, ազգային արժեքների նկատմամբ, որը ժամանակի ընթացքում պետք է մեծացնել, ավելացնել և հասցնել գիտակցական ամենաբարձր մակարդակին: Իսկ բարու և գեղեցիկի հետ առնչվելիս կարևոր արժեք է համարվում ճշմարտությունը:

Անձի մասին կարելի է դատել նրան բնորոշ արժեքներով, որոնք ձևավորում են նրա ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, ապա դրանք ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում նրա կեցության հիմքը և դառնում ազգի բնականոն գոյության անխափան զարգացման երաշխիքը:

Ազգային-ավանդական արժեքներին զուգահեռ կարևորվում են նաև համամարդկային արժեքները, որոնք առավել ընդգրկուն են և ձևավորվել են մարդ արարածի աշխարհ գալու հետ միասին:

Եվ այսպես, այս բոլոր կարևորագույն արժեքները միավորվում են, դառնում մի կուռ ամբողջություն և ձևավորում աշխարհին ու հասարակությանը պիտանի մարդ-անհատին:

ԳԼՈՒԽ 1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ինչպես արդեն նշեցինք, արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և ազգային արժեքների համախումբն է: Եվ հենց սրանք են ապահովում անձի ներդաշնակ ու բազմակողմանի զարգացումը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ ներառելով համամարդկային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում անգնահատելի է դպրոցի դերը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժանիքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները[1]:

Անհատի արժեհամակարգի ձևավորման գործում անգնահատելի է հատկապես մայրենիի և գրականության դերը:

Դպրոցում գրականության դասավանդման նոր հայեցակարգը այսպես է սահմանում առարկայի տեղը ուսումնական այլ առարկաների շարքում:

---

[1]Տե՛ս Ա.Գևորգյան, «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում», Երևան 2002. էջ 65

«Գրականության ուսումնասիրությունը սովորողների բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության, երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրական ճաշակի ձևավորմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման ու ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և մեծապես նպաստում է բարձր բարոյական գծերի՝ հայրենասիրության, քաղաքացիական պատասխանատվության, մարդասիրության, կարեկցանքի ու հանդուրժողականության, ընկերասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը, զգացական-հուզական և գաղափարական դաստիարակությանը»[2]:

Ուսուցման նպատակների շարքում ընդգծվում է մասնավորապես հետևյալը.«Գրականության դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոկակամային այլ հատկանիշներ»[3]:

Իսկ ինչպե՞ս ստեղծվեց գրականությունը, գրականություն, որի միջոցով անհատի մոտ պիտի ձևավորվի արժեհամակարգը:

Դեռ դարեր առաջ Հայկական լեռնաշխարհում ծնունդ առավ աշխատասեր ու շնորհաշատ մի ժողովուրդ: Ժողովուրդ, որ ապրել ու ապրում է՝ լցված արարչագործ մի անհանգստությամբ, ժողովուրդ, որ ստեղծել ու ստեղծում է իր մտքից ու ձեռքից եկածը:

Դարերի հոլովույթում հայ ժողովուրդը բազում տառապանքներ է կրել, պայքարել օտար նվաճողների դեմ, բայց չնայած դրան՝ ժողովուրդն արարել է,

---

[2] Տե՛ս Վ.Կիրակոսյան, Գրականությունը 7-9-րդ դասարաններում: Մեթոդական ձեռնարկ, Երևան 2006, էջ 60

[3] Տե՛ս Վ.Կիրակոսյան, Գրականությունը 7-9-րդ դասարաններում: Մեթոդական ձեռնարկ, Երևան 2006, էջ 60

ստեղծել հոգևոր ու նյութական մնայուն արժեքներ, որոնք էլ դարձել են հենց նրա գոյի հենասյուները:

Ու եթե այսօր ժամանակների տիեզերահաշիվ այս հեռաստանների հեռվից մենք կարողանում ենք տեսնել անցած-գնացածներին, ճանաչել նախնի հայ մարդկանց, լսել նրանց անգո ձայները, իմանալ խորունկ մտքերը ու դաստիարակվել նրանց արժեհամակարգով, ապա դրա համար ամենից առաջ պարտական ենք հայոց գրավոր լեզվով ստեղծված գրականությանը, ձեռքով տառ առ տառ գրված մեր հին ու հնադարյան գրքերին:

Հիրավի, հայոց բազմադարյան կեցության ճանապարհին հայ ժողովուրդն ստեղծել է իր գոյության իրավունքը հաստատող հոգևոր հարուստ մշակույթ և կարողացել է դարերի միջով մեզ հասցնել այդ բարձր մշակույթը՝ ձեռքի ափով, ինչպես մոմի լույսը, պաշտպանելով այն ժամանակի հողմերից:

Դեռ վաղնջական ժամանակներից ստեղծված հոգևոր այդ հարուստ մշակույթում իր պատվավոր ու առանձնահատուկ տեղն ունի մեր բազմաբովանդակ և հարուստ գրականությունը:

Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ մեծն Թումանյանը գրել է.«Գրականությունը ազգի հոգին է, և գրողները՝ էդ հոգու ծնունդներն ու արտահայտիչները»[4]:

Շարունակելով Թումանյանին՝ պետք է ասել, որ գրականությունը ոչ միայն ազգի հոգին է, այլև ազգային կյանքի ու հայ մարդու ձևավորողն ու դաստիարակողը, հայ մարդու բարոյական նկարագրի կերտողը, քանզի արդի ժամանակաշրջանում սրված է մի կարևոր հիմնախնդիր՝ ինչպես պահել ու պահպանել ազգային դեմքը՝ մտնելով համամարդկային կյանք:

Գրականությունը մշակութային արժեք է, ժողովրդի յուրատեսակ անձնագիր, գալիքին ուղղված պատգամախոս, հայ մտքի ու նպատակների տարածող: Հայ գրականությունն ունի ճանաչողական արժեք: Տարբեր լեզուներով մեր գրական գոհարների թարգմանությունները նպաստում են օտարների կողմից հայ մարդու ու հայ երկրի, նրա հոգևոր ու ազգային արժեքների ճանաչմանն ու ընկալմանը:

Գեղարվեստական գրականությունը ազգային արժեք է, մանավանդ հայերիս համար, շտեմարան մտքի ու ոգեղեն թռիչքների: Այն գեղագիտական իդեալների, հայ մարդու պատկերավոր մտածողության, զգացմունքների դրսևորումների ու սերունդների տևական երթի խթան է:

Գրականությունը օգնում է մեզ տեսնել մարդու ներքին գեղեցկությունը, սովորեցնում հասկանալ և գնահատել այն:

---

[4] Տե՛ս Հովհ.Թումանյան, Ընտիր երկեր, հ.2, Երևան 1985, էջ 342

Գրականությունը ոգու և անհատականության կերտման հզոր աղբյուր է: Գեղարվեստական պատկերների բացահայտման միջոցով գրականությունը մեզ հնարավորություն է ընձեռում բացահայտելու չարի ու բարու, կեղծիքի և ճշմարտության հասկացությունները: Ոչ մի պատճառաբանություն, առավել համոզիչ, չի կարող այնպիսի ազդեցություն ունենալ մարդու մտքի վրա, որքան ճշմարտացիորեն գծված պատկերը: Եվ սա է գրականության ուժն ու նշանակությունը:

Գրականությունը նպաստում է նոր սերունդների դաստիարակությանն ու զարգացմանը, օգնում է բացել մարդկության կատարելագործման նոր հորիզոններ: Եվ այստեղ մեծ անելիք ունի գրականության ուսուցիչը, ով սովորողների մեջ ձևավորում է արժեհամակարգ:

Հենց նա է գրականության դասերին, ներկայացնելով հայ և համաշխարհային գրողների ստեղծագործությունները, մի ամբողջ արժեքային ֆոնդ փոխանցում աշակերտներին: Ի վերջո, նա է, ով սովորողների առջև բացում է մարդկանց աշխարհը, ցույց տալիս նրանց միջև հարաբերությունների ամբողջ բազմազանությունը և կերտում, ձևավորում նրանց որպես մարդ: Այստեղ տեղին է հիշել ամենայն հայոց բանաստեղծի՝ Թումանյանի խոսքերը.«Ամեն բան հեշտ է, մի բան է դժվար. Մարդ լինելը: Հեշտ բան հո չէ՞ Մարդ լինելը …»: Կամ՝ «Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի համեմատել Մարդ կոչումի հետ»[5]:

[5] Տե՛ս Վ.Սահակյան, Ռ.Ներսիսյան «Հայ դասականների մտքի գանձարանից», Երևան 2005, էջ 68

ԳԼՈՒԽ 2

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ «ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ» ՎԻՊԵՐԳՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի՝ դարերի ընթացքում ստեղծած հոգևոր հարուստ մշակույթում իր առանձնահատուկ տեղն ունի ժողովրդական բանահյուսությունը: Այդ բանահյուսության մեջ ընդգրկված զրույցներն ու երգերը արտացոլում են հայ ժողովրդի հավատալիքներն ու դարավոր պատմական ուղին: Այդ զրույցներն ու երգերը մեր նախնիները կոչել են վիպասանք, առասպելներ, թվելյաց երգեր: Դրանք պատմել ու երգել են ժողովրդական երգիչ-գուսանները՝ վիպասանները, փանդիռի և երաժշտական այլ գործիքների նվագակցությամբ:

Հայ հին բանահյուսական երկերը, անցնելով դարից դար, հասել են մինչև մեր ժամանակները: Դրանց որոշ նմուշներ գրի են առնվել տարբեր դարերում: Այս գործում մեծ է եղել 5-րդ դարի պատմիչ Մ. Խորենացու դերը: Հետագա դարերում նրան հետևել են այլ մատենագիրներ ու բանահավաքներ՝ Խորենացու նման գրի առնելով ժողովրդական բանահյուսության անգին պատառիկներ:

Ժողովրդական բանահյուսության հնագույն շերտն են կազմում հայ հին վիպերգերը՝ առասպելախառն պատմություններով ու երգերով: Դրանք ներկայացնում են հայ ժողովրդին, նրա պետականության կազմավորումը և ծավալումը, նրա հաղթական և ազատագրական պայքարը:

Հենց այս ստեղծագործություններում են վառ կերպով արտահայտվել մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, պայքարելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Այս վիպերգերով կրթվող ու դաստիարակվող սերունդն է, որ պիտի շարունակի ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տա իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

ա/ <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> վիպերգը

Վիպերգերի շարքում իր առանձնահատուկ տեղն ունի «Արա Գեղեցիկ և Շամիրամ » վիպերգը: Այս ավանդավեպը շատ սիրված ու տարածված է եղել ժողովրդի մեջ և բանավոր ու գրավոր ճանապարհով գոյատևել է տասնյակ դարեր:

Խորենացին պատմում է, որ Ասորեստանի Նինոս թագավորի կինը՝ վավաշոտ գեղեցկուհի Շամիրամը, լսելով հայոց թագավոր Արայի արտասովոր գեղեցկության մասին, ցանկանում է տիրել նրան: Սակայն նա չի հանդգնում բացահայտ գործել ամուսնու կենդանության ժամանակ: Միայն նրա մահից հետո, դառնալով Ասորեստանի թագուհի, նա բացահայտ գործողությունների է դիմում Արային տիրելու համար: Մի քանի անգամ նա ընծաներով Արայի մոտ է ուղարկում իր պատգամավորներին՝ խնդրելով գալ իր մոտ: Շամիրամն առաջարկում է Արային կա՞մ ամուսնանալ իր հետ և թագավորել Ասորեստանում և կա՞մ կատարել իր ցանկությունները ու մեծամեծ նվերներով վերադառնալ հայրենիք:

Սակայն Արան կտրականապես մերժում է Շամիրամի բոլոր առաջարկները՝ **հավատարիմ մնալով կնոջն ու հայրենիքին**: Տռփասեր Շամիրամը այժմ էլ փորձում է բռնությամբ տիրել Արային և պատերազմ է հայտարարում՝ նախօրոք իր զինվորներին պատվիրելով չսպանել, այլ կենդանի բռնել հայոց թագավորին:

Բայց ճակատամարտում հայոց զորքը պարտություն է կրում, իսկ Արա Գեղեցիկը զոհվում է քաջաբար: Շամիրամի մարդիկ մարտի դաշտում փնտրում-գտնում են Արայի դիակը և բերում պալատ: Շամիրամը հրամայում է դիակը դնել ապարանքի վերնատանը, որպեսզի իր աստվածները՝ արալեզները , լիզելով Արայի վերքերը, կենդանացնեն նրան:

Երբ հայոց զորքը Արայի մահվան վրեժն առնելու համար պատրաստվում է նորից պատերազմելու Շամիրամի դեմ, վերջինս հայտարարում է , որ իր աստվածներին հրամայել է լիզել Արայի վերքերը և կենդանացնել նրան:

Շամիրամը, իրոք, հույս ուներ, թե իր կախարդական դյութությամբ կկենդանացնի Արային ու կտիրի նրան: Բայց դիակը նեխում է, և Շամիրամը, իր սիրեկաններից մեկին հագցնելով Արայի զգեստները, հայերի մեջ լուր է տարածում, թե արալեզները կենդանացրել են հայոց թագավորին:

Ժողովուրդը <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> ավանդավեպում Արա Գեղեցիկին պատկերել է **որպես բարձր բարոյականության տեր հերոսի, ով ամեն ինչից բարձր է դասում հայրենիքի շահը և ընտանեկան պատիվը**: Այդպես էլ պիտի լիներ, քանզի նա ծնունդ է առել մի աշխարհում, ուր գործում են առաքինության ու վարքի վսեմ սկզբունքները, բարոյական բարձր արժեքները:

Ինչպես տեսանք, վիպերգի գաղափարական շարժիչ ուժը **հայրենասիրությունն է, հայրենիքին ու ընտանիքին նվիրված լինելը**:

Սա այն **ազնվագույն արժեքն** է, որը կազմում է մեր կեցության, մեր գոյության անքակտելի հիմքը, կերտում մեր ազգային դիմագիծը և դառնում երաշխիքը մեր հետագա գոյության, մեր հարատևության ու հավերժության:

բ/ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգի մշակումները հայ հեղինակների կողմից /Վ.Տերյան, Ե.Չարենց/

Արա Գեղեցիկը հայ ժողովրդի սիրելի հերոսներից մեկն է, այդ պատճառով էլ դարերի ընթացքում նրա մասին հյուսվել են բազմաթիվ բանաստեղծություններ, դյուցազներգություններ, որտեղ Արան հանդես է գալիս իբրև **հայրենասիրության մարմնացում**:

Հետաքրքրությունն այս ավանդավեպի նկատմամբ մեծանում է հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հայաստանը գտնվում էր շատ ծանր վիճակում, ապրում էր իր պատմության ամենաողբերգական օրերը: **Եվ ահա 1915թ. Վ. Տերյանը գրում է «Չեմ դավաճանի իմ Նվարդին» տրիոլետը, որտեղ Արան հանդես է գալիս իբրև աննկուն մի հայրենասեր՝ հավատարիմ իր հայրենիքին, իր ընտանիքին.**

Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ~, Շամիրամ,
Որպես արքան այն, մանուկ Արան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին:
Որքան փորձանք գա իմ զոհ սրտին,
Որքան էլ փայլդ փայե նրան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ~, Շամիրամ:

Տերյանը, ինչպես տեսնում ենք, հավատարիմ է մնացել Խորենացու գրի առած ավանդավեպի հայրենասիրական ոգուն:

Վիպերգը հետաքրքրել է նաև հանճարեղ բանաստեղծ **Եղիշե Չարենցին: Դեռևս 1916թ. նա գրում է «Շամիրամ» վերնագրով բանաստեղծությունը:** Այս բանաստեղծության մեջ Չարենցը կերտում է Ասորեստանի թագուհու կերպարը, որտեղ նա հանդես է գալիս իբրև հեշտասիրության մարմնացում: Թեև արդեն ծեր է նրա մարմինը, և մարած աչքերում էլ հրդեհ չկա, բայց դարերի ընթացքում նույնն է մնացել նրա երազը.

Եվ չնայած որ անթիվ դարեր են անցել,
Նո՜ւյնն է երազը նրա, լոկ մարմինն է ծեր:
Նո՜ւյնն է խոսքը կարծես նոր տրվող աղջկա,
Միայն մարած աչքերում էլ հրդեհ չկա:

Երկրորդ բանաստեղծությունը՝ դարձյալ վերնագրված «Շամիրամ», Չարենցը գրում է 1920թ.: Այստեղ արդեն բանաստեղծը մտորում է իրական հարցերի, խնդիրների շուրջ, որոնք չափազանց կարևոր են: Նա այլաբանորեն ներկայացնում է Հայաստանի քաղաքական անմխիթար վիճակը, երկիր, որ կանգնած է մահվան անդունդի եզրին: Ի՞նչ դրության մեջ է հայրենիքը, ո՞վ է սպառնում նրան: Հայրենիքի սահմաններին է մոտեցել անհրապույր, «կանաչ» աչքերով ցանկասեր Շամիրամը: Այժմ ինչպե՞ս կվերաբերվեն Հայաստանի «արքաները» թագուհուն, արդյոք հարկավո՞ր կլինի նորից պատերազմել: Իհարկե, ո՜չ. չէ՞ որ այժմ փոխվել են ժամանակները, այժմ բոլոր «արքաներին» հարկավոր է միայն մեկ ժպիտ, և նրանք անխտիր կտրվեն Շամիրամին.

Այլ է աշխարհը հիմա, այլ է հիմա Նաիրին,
Ոչ մի արքա էլ չկա, որ չտրվի քո հրին...
... Ոչ վեճն է էլ հարկավոր, ոչ պատերազմ մահառիթ,
Արքաների համար նոր – բավական է մի ժպիտ,
Միայն ակնարկ մի թեթև - և կտրվեն նրանք քեզ,
Քո հմայիչ ու անթև տարփանքներին հրակեզ:

Սա ողբերգություն է, ամենասարսափելի ողբերգությունը: Ովքե՞ր են փոխարինել մեր անզիջում հայրենասերներին, ովքե՞ր... մարդիկ, <<արքաներ>>, որոնց բարոյական աշխարհը աղավաղվել է, որոնց իշխում է կույր կիրքը, որոնք հետին գիծ են մղել հայրենիքի շահն ու ընտանիքի պատիվը: Չարենցին հուզում է արայատիպ արքաների բացակայությունը:

Բայց, այնուամենայնիվ, այս բոլորից հետո էլ Չարենցը չի կորցնում իր պայծառ լավատեսությունը, հավատը լուսավոր ապագայի նկատմամբ: Այո՜, նա հավատացած է, որ կգա այն օրը, երբ Շամիրամի առջև կկանգնի «մանկաժպիտ» Արան, նորից պատերազմ կլինի, ու կպարտվի մեր զորքը: Ու թեև երկիրը կմնա Շամիրամին, բայց **բարոյական հաղթանակը Արան կտանի.**

Եվ դաշտերում Նաիրի կպարտվի նորից նա,
Կնահանջե զորքը ետ, երկիրը քեզ կմնա:
Նա կմեռնի, որպես զոհ – բայց չես հաղթի դու նրան.
-Դա՜ռն է խորհուրդը սիրո, շամբշոտաշուրթ Շամիրամ:

Հետաքրքիր է, որ Չարենցը Արա Գեղեցիկի սյուժեին անդրադարձել է նաև կյանքի վերջին տարիներին: **1936թ. նա գրում է «Դոֆին նաիրական» շարքը,** յոթ սոնետ՝ գրված Հայաստանի Կ(բ)Կ կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի մահվան առթիվ (1901-1936):

Արա Գեղեցիկի կերպարին նա անդրադարձել է յոթերորդ և սրան ավելացրած ութերորդ՝ «Իմաստություն» սոնետներում: Բանաստեղծն այս սոնետներում Աղասի Խանջյանին համեմատում է հայրենասեր Արայի հետ: Որքան էլ գայթակղի նրան «շամբշոտաշուրթ» Շամիրամը, այնուամենայնիվ **Արան կմնա որպես հայրենասեր, անդավաճան արքա՝ հավատարիմ իր հայրենիքին և իր Նվարդին.**

Անդավաճան հավետ իր Նվարդին ու նա,
Արյունն, արյունն իր սուրբ և հուրհուրան,
Քանիերորդ անգամ, օ~, Շամիրամ,
Հառնե արքան մանուկ, որ չսպառնաս...

Ու որքան էլ նոր «նախարարներն» այսօր տրվեն Շամիրամին, որքան էլ գրավվեն նրա հմայիչ արտաքինով, այնուամենայնիվ ազնիվ ու առաքինի Արան կհառնի կրկին իր հզոր պարտությամբ ու բարոյական հաղթանակով.

Որքան իշխեն թող նոր նախարարներն այսօր
Շամիրամի մահճին, գանակոծեն իր դին,-
Նա կհառնի կրկին՝ իր պարտությամբ հզոր...

Ինչպես տեսնում ենք, Եղիշե Չարենցը ևս հարազատ է մնացել Խորենացու գրի առած վիպերգի **հայրենասիրական ոգուն:**

Նրա բանաստեղծություններում Արան միշտ էլ հանդես է եկել իբրև **հայրենասեր հերոս, իբրև հավատարիմ ամուսին:**

գ/ Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգի խորհրդավոր էությունը շատ ու շատ գրողների թվում հուզել է նաև Նաիրի Զարյանին: Զարյանը, հիմք ունենալով վաղնջական մի ավանդավեպ, ստեղծել է մի հոյակապ ստեղծագործություն: Այս ողբերգությունն իր էությամբ հարազատ է Խորենացու վիպերգի **հայրենասիրական ոգուն**:

Ն. Զարյանը, հիմք ունենալով Խորենացու վիպերգը, կատարել է որոշ շեղումներ և հավելումներ:

1. Ըստ Խորենացու՝ Շամիրամը Արայի նկատմամբ կիրք է տածում հեռվից և այն գաղտնի պահում: Իսկ Զարյանի ողբերգության մեջ Շամիրամը սիրահարվում է Արային նրա՝ Նինվե կատարած այցելության ժամանակ՝ առաջին հանդիպման պահին:
2. Խորենացու ավանդավեպի համաձայն՝ Արան վճռականապես մերժում է Շամիրամի բազմիցս արված առաջարկությունները, և նույնիսկ ակնարկ չկա, թե նա ինչ-որ զգացմունքներ է տածում Ասորեստանի թագուհու նկատմամբ: Մինչդեռ Զարյանի ողբերգության մեջ Արան նույնպես սիրահարվում է Շամիրամին, ապրումներ ունենում, տառապում:
3. Ըստ վիպերգի, երբ Արան կտրականապես մերժում է Շամիրամին և չի գնում Ասորեստան, վերջինս հարձակվում է Հայաստանի վրա: Այս ճակատամարտում հայոց թագավորը սպանվում է: Իսկ Զարյանի ողբերգության մեջ Արան պատերազմի դաշտում փորձում է նետահարել սիրած կնոջը, բայց երկու անգամ էլ իջեցնում է հայկյան լայնալիճ աղեղը, քանզի նրա առջև կանգնած է մի կին, որը թեև իր երկրի թշնամին է, և որին Արան մերժել է, բայց դեռևս շարունակում է սիրել. չէ՞ որ սրտին հրամայել չես կարող:

Ողբերգության առաջին արարը, որ վերնագրված է «Հայկյան աղեղը», սկսվում է Ասորեստանի կյանքի հակասություններով: Անհանգստացած են Շամիրամի մերձավորագույն զինակիցները՝ Նիրարը, Արտաբանը և Ասսարը: Արտաբանը խռովված նայում է երկնքին, տագնապում թռչող արծվի համար, որն արհավիրք է գուշակում: Ի՞նչն է նրանց անհանգստության պատճառը: Ասորեստան է ժամանելու հայոց թագավորը՝ գեղեցկատես Արան: Ահա Արտաբանն էլ անհանգստացած է նրա այցով, և կարծես երկնքում սավառնող արծիվը հաստատում է նրա նախազգացումները: Անհանգստանալու երկու պատճառ ունի նա. առաջին, որ եթե

Ասորեստանի և Հայաստանի միջև դաշինք կնքվի, Արան կուժեղանա, և երկրորդ, որ ավելի զորավոր է, Շամիրամի անկայուն բնավորությունը: Ասորեստանի թագուհին անկասկած, տեսնելով գեղեցիկ Արային, կսիրահարվի նրան: Արտաբանը լավ է հասկանում, որ ինքը չի դիմանա մի այնպիսի զորեղ մրցակցի, որպիսին Արա Գեղեցիկն է:

Ասորեստան է ժամանում հայոց թագավոր Արան՝ դաշինք կնքելու Նինոսի հետ: Շամիրամը և նրա զինակիցները քաջ գիտակցում են, որ հայերը կարող են ուժեղ մրցակից լինել, և ամեն ջանք գործ են դնում՝ խափանելու դրացի երկրի բարեկամությունը: Հենց առաջին իսկ հանդիպման ժամանակ Շամիրամի մեջ գլուխ է բարձրացնում **տիրակալը**, և նա սկսում է իր հոգեբանական հարձակումը՝ Արայի բերած ընծաները հարկ անվանելով: Իսկ Արան արժանի պատասխան է տալիս.

Հոժար սրտով եկել եմ ես Ասորեստան
Եվ ձեզ բերել եմ ոչ թե հարկ ստրկության,
Այլ ընծաներ հավասարից հավասարին:

Շամիրամի այս հոգեբանական գրոհը նաև սիրային գրոհի մի յուրօրինակ արտահայտություն է: Նա պահանջում է Վաշտակից հաշտեցնել իրեն հայոց արքայի հետ և ապա շարունակում է իր գրոհը՝ դիմելով Արային.

Եթե ինձ թույլ տա վեհասիրտ Արան,
Ես անպաճույճ խոսքերով իսկույն ևեթ…
Կբացատրեմ իմաստն իմ կատակի:
Դա մի քմահաճույք էր կանացի:

Զրույցը կարծես վերածվում է բուռն գրոհների, և թափանցիկ ակնարկներով Շամիրամը շարունակում է իր հոգեբանական հարձակումը.

Իշտար քեզ հետ, ով ա՛յրդ ոգելից.
Ազնվությանդ կարծրությունը ժառանգել ես դու
Հայոց դաշունաձև այն ապառաժներից,
Որոնց վրա խոսում էր իմ դեսպան Ասուր-Գաբբու:

Հայոց արքան որոշակի պաշտպանական տակտիկայի է անցնում.

Թեպետ օտար ջրերը խոստանան անմահություն,
Հայրենիքիդ լեռան աղբյուրն է քաղցրահամ:

Այստեղ դրսևորվում են Արայի բնավորության բացառիկ գծերը՝ **նրա վառ հայրենասիրությունը, մտքի սրությունը, հավատարմությունը:** Այդ մասին վկայում են նաև Նինոսն ու Շամիրամի զինակիցները:

Առաջին արարի վերջում՝ այդ հոգեբանական գրոհներից հետո, կարծես Շամիրամի ու Արայի միջև կնքվում է մի հաշտություն. Շամիրամն Արային անվանում է Ատտիս աստված, իսկ Արան Շամիրամին՝ Աստարդ աստվածուհի:

Այս ընթացքում՝ խնջույքի թեժ պահին, իրարանցում է սկսվում: Պարզվում է, որ երկնքում ճախրող արծիվը հափշտակել է Նինոսի համար նախատեսված աղավնուն: Հենց այդ ժամանակ էլ հայոց արքան հայկյան լայնալիճ աղեղով նետահարում է Ասորեստանին մեծ աղետներ գուժող արծվին: **Այստեղ ևս բացահայտվում է Արայի բնավորության լավագույն գծերից մեկը:** Երբ Վաշտակը հանդիմանում է նրան, թե ինչու ասորեստանցիներին սպասվող աղետը կանխեց, Արան պատասխանում է.

Ես պարտավոր էի… Օգնել եմ ես իմ դաշնակցին:
Բարի՜ գործիր, եթե ունես առիթ և զորություն.
Մեզ մեր վսեմ նախնիք այսպես ավանդեցին:
Եվ սա է գեղեցիկ:

Ասորեստանցիները Արայի այս ազնիվ արարքը ընկալում են որպես «աստվածային» սխրագործություն ընդդեմ «չար աստվածների»: Շամիրամը ևս հիացմունքով մեծարում է Արային: Բայց արդեն հաջորդ արարում Ասորեստանի թագուհին մռայլ կանխազգացմամբ սկսում է վախենալ իր «Ատտիսից».

Արծիվն է ինձ հուզում…

Նա գուշակում է մի ահեղ հարված: Նրան սարսափեցնում է իրական վտանգը: **Տիրակալ** Շամիրամի հոգում փոթորկվում է երկու զգացմունք: Եթե մի կողմից նա ատելություն է տածում Հայաստանի նկատմամբ, ապա մյուս կողմից էլ չի կարողանում անտարբեր մնալ գեղատեսիլ Արայի նկատմամբ, սիրահարվում է, տենչում նրան: Եվ ահա, սիրահարվելով Արային, նա վախենում է Ասորեստանի հզորության և փառքի համար:

Ասորեստանի թագուհու բնավորությունն ամբողջապես բացահայտվում է երկրորդ արարում («Շամիրամ»): Զարյանը շատ լրջորեն և ուշադիր է մշակել Շամիրամի կերպարը: Շամիրամն ունի կանացի համոզիչ գծեր: Նրա մենախոսությունից իմանում ենք թագուհու դրամատիկ ճակատագրի, հոգու տվայտանքների մասին: Նա վերհիշում է իր կյանքը մինչև Արային հանդիպելը: Ամայի քարանձավներից մեկում նրան գտել է հովիվ Սիմեսը, նա սնվել է վագրերի կաթով: Գեղեցիկ է եղել Շամիրամը, բոլորը խոնարհվել են նրա գեղեցկության առջև, բայց.

Չկար մի այր, որ ողոքեր իմ սիրտը բոցակեզ,

Որ առնական հանդգնությամբ նայեր իմ աչքերին
Եվ դող ազդեր հոգուս:
Տխուր է եղել բարի Մենոնի հետ նրա կարճատև ամուսնությունը.
… Ազնիվ մի ամուսին էր նա.
Սակայն դողում էր յուր ահեղ երջանկության վրա
Եվ իմ սառնությունից հալվում էր հուսաբեկ:

Շուտով այդ գեղեցիկ ու հզոր կնոջը դավադրաբար նվաճում է Նինոսը՝ սպանելով բարի ու ազնիվ Մենոնին: Բայց այս նենգությունը դառնություն է թողնում Շամիրամի հոգում: Նա, դառնալով Ասորեստանի թագուհի, մասնակցում է Նինոսի գործերին ու արշավանքներին, բայց ամուսինը «ժամանակի ընթացքում հետ է մղում Շամիրամին՝ պահելով նրան սոսկ իբրև գեղեցիկ կին»:

Ինչ խոսք, սա մի ծանր հարված էր **փառատենչ, տիրակալ** կնոջ համար: Սակայն այս գեղեցկուհին, այս հզոր ու **աշխարհատենչ** թագուհին տառապում է նաև իբրև կին: Նա չի սիրել Մենոնին, չի սիրում նաև Նինոսին: Թեև վերջինս նենգությամբ տիրել է իր մարմնին, բայց Շամիրամը «երազների ոսկեավազ անապատում» դեռ շարունակում է փնտրել «արծվաչյա յուր Ատտիսին»: Շատ շուտով հայտնվում է այդ իսկական սերը, որ տակնուվրա է անում փառատենչ կնոջ հոգին.

Ահավասիկ և սերը…նա, որին փնտրել եմ ես
Երազներիս ոսկեվազ անապատում…

Դրամատուրգը կարողանում է թափանցել հերոսուհու հոգու նրբին ծալքերը, ցույց տալ նրա փոթորկահույզ հոգին, սիրո սարսուռները, տագնապները: Խորն է ու անդիմադրելի Շամիրամի սերը գեղեցկադեմ ու առաքինի Արայի նկատմամբ, բայց իրավացի է նաև նրա կասկածը, իսկ արդյոք սիրու՞մ է իրեն այդ հպարտ ուրարտացին:

Եվ Արային նվաճելու համար Շամիրամը գործի է անցնում: Խորամանկ այս կինը նվաճում է իշխանությունը Նինոսից միայն մեկ օրով և սկսում իր արյունոտ գործողությունները: Նա լավագույն պաշտոնները հանձնում է իր մերձավորագույն զինակիցներին և հրամայում գլխատել Նինոսին: Ամուսնու այն հարցին, թե ինչ է Շամիրամի մտադրությունը, անողոք թագուհին հիշեցնում է իր վաղեմի վիրավորանքը.

Մտադրությո՞ւնս … արդ կասեմ և կիմանաս:
Դու խաղացիր ասորական գահով,
Որ մի կնոջ սրտին տիրել կարողանաս:
Բայց մի՞թե սերը նվաճում են սողալով:

Հենց այստեղ էլ արտահայտվում են Շամիրամի վարքագծի հակասությունները: Շամիրամն ատելի Նինոսին հիշեցնում է այն մասին, որ սերը չի կարելի «նվաճել սողալով»: Բայց տարված Արայի սիրով՝ Շամիրամը հետո ինքը կմոռանա այդ մասին:

«Արա Գեղեցիկի» առաջին երկու գործողությունները կատարվում են Ասորեստանում՝ Նինոսի ու Շամիրամի պալատում: Հաջորդ արարները մեզ տեղափոխում են Հայաստան աշխարհ:

Զարյանը, ի հակադրություն Ասորեստանի կյանքի հակասություններին, պալատական դավերին ու խարդավանքներին, ցույց է տալիս **անխռով, խաղաղ, ստեղծարար աշխատանքով ապրող Հայոց աշխարհը:** Այստեղ ամբողջապես ընդգծվում է երկու աշխարհների տարբերությունը: **Եթե Ասորեստանում մշակվում են նվաճողական ծրագրեր, եթե այստեղ տիրում են նենգությունը, խարդախությունն ու ուխտադրժությունը, ապա Հայաստանում իշխում են անհուն սերը, խաղաղությունը, ստեղծագործական աշխատանքը**: Այստեղ բոցավառվում է ծաղկի ու ջրի տոնը՝ Վարդավառը: Ուրախ երիտասարդները ջուր են ցանում միմյանց վրա, հարվածում իրար ուռենու ճյուղերով: Նրանց ոգևորել է խաղաղության դաշինքը, նրանք հանգիստ են պարգևել պատերազմի աստվածներին ու նվիրել «աշխարհաշեն մի կառուցման»: Այս տոնախմբությամբ հիացած է նաև ասորական դեսպան Ասուր-Գաբբուն.

Սրանք, ոգեշնչված Նինևիայի դաշնագրով
Եվ բազմամյա խաղաղության հեռապատկերներով,
Հանգիստ են պարգևել պատերազմի աստվածներին
Եվ նվիրել աշխարհաշեն մի կառուցման:

Գուսանները մեկ անգամ ևս հիշեցնում են Հայկի սխրագործությունների մասին, փառաբանում են **շինարար ա**րքային՝ Արային: Եթե Ասորեստանի երկնքում պտտվում է արհավիրքներ գուշակող չար արծիվը, ապա Հայաստանի կապուտակ երկնքում ճախրում է Վարուժանի արծակած, սերը խորհրդանշող ճերմակ աղավնին: Ողբերգության ամենաբանաստեղծական, հուզիչ ու գեղեցիկ դրվագներից է Վարուժանի զրույցը աղավնու հետ:

Այս գեղեցիկ, խնդուն տոնախմբությունը մռայլվում է Շամիրամի դեսպան Նիրարի ժամանմամբ: Ստեղծագործ աշխատանքով ապրող ժողովուրդը տագնապի մեջ է: բոլորը մտահոգված են Շամիրամի և Արայի բարդացող հարաբերություններով: **Հայաստան աշխարհում Ասորեստանի թագուհուն անվանում են «չար վհուկ», «մոլեգնատարփ», «ցոփ»: Ն. Զարյանի ողբերգության մեջ Շամիրամը**

հայերի համար չարի մարմնացում է: Խաղաղասեր երկրին սպասվող վտանգը տագնապով է երգում պատանի գուսանը.

Տագնապն է ծանրացել հայոց երկրին,
Ազատ Մասյաց գլխին վիշապն է մութ ամպել,
Թույնով է դառնացել հայոց Վարդավառի գինին,
Չի մեր դարպասը վերստին բախում է Բել:

Գուսանը հակադրում է իրար երկու աշխարհների թագուհիներին: **Նա ընդգծում է Նուարդի բարոյական գեղեցկությունը**: **Ժողովուրդը, գեղեցկություն ասելով, ամենից առաջ հասկանում է հոգու գեղեցկությունը**: **Շամիրամը գեղեցիկ է արտաքնապես, բայց հոգեպես նա մի հրեշ է, չարի կրող, դա է պատճառը, որ հայ ժողովրդի համար նա տգեղ է:** Այս առումով շատ բնորոշ է Վարուժանի ու Նանեի խոսակցությունը: Վարուժանը, հիշելով Նինվե կատարած այցելությունը, նկարագրում է Շամիրամի արտաքին տեսքը, նրա չքնաղ գեղեցկությունը, «շարմաղ»երեսը: Բայց Նանեի համար **Շամիրամը չար, անզուսպ մի կին է: Եթե Վարուժանը նկարագրում է Շամիրամին արտաքնապես, ապա Նանեն թափանցում է նրա էության մեջ, մերկացնում նրա չար, թունոտ հոգին**: Նա վրդովված է այն բանից, որ Արան սիրահարվել է այդ «վհուկ» Շամիրամին՝ թողնելով իր Նուարդին լալով, իր հողը անպաշտպան: Եվ իր ամբողջ զայրույթը նա թափում է Վարուժանի գլխին՝ սպառնալով գանգատվել հորը և խափանել ամուսնությունը.

Ափսոս է թագուհիս… անուշ է, մայրահամ,
Նուարդի մեկ ճկույթն արժե հազար քո Շամիրամ:

Նանեի ու Վարուժանի խոսակցությունը փոխանցվում է գինեգործ Արբակին, Կաթմոս վաճառականին, ծեր գուսանին, Արամանյակին և այլոց: Յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում այդ հարցը: **Գինեգործ Արբակը ժողովրդի հարազատ զավակն է, ժողովրդական մտածողության կրողը: Նա դեմ է Արայի՝ Ասորեստան մեկնելուն, գտնում է, որ այս կարևորագույն հարցը առնչվում է հայրենիքի ճակատագրի հետ.**

Եթե գնաս վահագնապաշտ մեր աշխարհից հեռու,
Կթառամի Արմավիրի արքայական այգին,
Սև ձյուն կգա Արագածի անուշաբույր ծաղկին,
Կցամաքի Ասսպա կարկաչահոս առուն,
Կկարճանա հայոց քաղցրիկ լեզուն:
Պատժի՜ր, եթե հանդուգն է քո ծառան,
Բայց մի՜ գնա Ասորեստան:

Գուսանը դարձյալ պատմում է բռնակալ Բելի և քաջարի Հայկի մասին: Այս նուրբ ակնարկով նա հիշեցնում է, որ Արան ևս պիտի վարվի այնպես, ինչպես Հայկը. **չէ՞ որ Շամիրամն էլ մի աշխարհակալ Բել է, որին տոչորում է Հայոց աշխարհը նվաճելու, իշխելու կիրքը**:

Այդպես են մտածում նաև զորավար Վաշտակն ու Արքայամայրը: Այս մթնոլորտում ամբողջանում է նաև Նուարդի կերպարը:

Հայոց թագուհին մարմնավորում է իր մեջ հայ կնոջ լավագույն գծերը: Նրա գեղեցկությամբ հիացած են նաև ասորիները՝ Նիրարն ու Ասուր-Գաբբուն: **Նրա արտաքին գեղեցկությանը զուգակցվում է հոգու գեղեցկությունը**: **Նուարդի մեջ խտացված են մայրության, սիրո ու մեղմության, անձնազոհության զգացումները**, որոնք հակադիր են Շամիրամի նույնքան կանացի ու հավերժական երազներին ու կրքերին: Մի էական տարբերություն ևս կա նրանց միջև: Նուարդը քաղաքագետ չէ, ոչ էլ աշխարհակալ, նա չի այրվում իշխելու, նվաճելու կրքով, ինչպես Շամիրամը: Ողբերգության դրամատիկ, հուզիչ հատվածներից է հայոց թագուհու մենախոսությունը Անահիտ աստվածուհու արձանի առջև: **Այս աղոթք-մենախոսությունը բացում է մեր առաջ Նուարդի բարի ու ազնիվ հոգին, ցույց տալիս նրա տագնապները, նրա ցավերը:** Կարծես սիրո մի հավերժական մեղեդի լինի այդ աղոթքը:

Տառապում է Նուարդը սիրած ամուսնու և հայրենի երկրի համար: Խորն է նրա ստացած վիրավորանքը: **Բայց իր մեջ խեղդելով վիրավորված կնոջ ինքնասիրության զգացումը՝ Նուարդը մտածում է հայրենիքի և Անուշավան որդու ապագայի մասին**: Դիմելով «կախարդված» Արային, որի հոգում «երկու աստված» է մարտնչում, նա, հազիվ զսպելով արցունքները, աղերսում է.

Որ կախարդված ես դու, Արա՜, այդ ես գիտեմ վաղուց:
Դաժան մի վիշտ է այդ մեր աշխարհին և ինձ:
… Սիրո՞ւմ ես …ի՞նչ արած… մեկնի՜ր Ասորեստան,
Շամիրամից արդեն եկել է նոր դեսպան…

Եթե Շամիրամի մեջ բորբոքվում են աշխարհակալ կրքերը, ապա Նուարդի մեջ ծփում է մեղմ ու քնքշագին զգացումը: **Եթե Շամիրամը ձգտում է Արայի սերը նվաճել բռնությամբ ու պատերազմով, ապա Նուարդը, պահելով հպարտության զգացումը, իր մեղմությամբ հանգստացնում է արքային: Եվ հենց այստեղ էլ նա հաղթում է:**

Արան զգում է, որ մոր բարկացած, սպառնալի խոսքերը ավելի են բորբոքում «կամքը լափող» հրդեհը, մինչդեռ Նուարդի հեզությունը մեղմ անձրևի նման թափվում է բոցի վրա: **Իր բարությամբ, հեզությամբ ու մեղմությամբ է Նուարդը**

պահում Արայի սերը: Նա կանխում է Արքայամորը՝ թույլ չտալով անիծել հայոց արքային.

Եթե տենչում է, թո՜ղ գնա: Ես կներեմ նրան
Ու վերադարձը կողջունեմ սրտով մաքուր…
Իբրև սիրող և կարոտած մի քույր…

Նուարդի այս մեծահոգությունը ցնցում է հայոց արքային, կարծես արթնացնում նրան դարավոր նիրհից: Արան քաջ է, բարի ու խելացի: Ինչ խոսք, առաջին իսկ հանդիպման ժամանակ նա կախարդվում է Շամիրամի գեղեցկությամբ, տենչում նրան: Տանջվում է Արան, տառապում: Բայց ահա գալիս է այն պահը, երբ հայոց թագավորը տատանվում է. ո՞ւմ ընտրել՝ Նուարդի՞ն, թե՞ Շամիրամին, իսկ սա նշանակում էր ընտրություն կատարել Հայաստանի և Ասորեստանի միջև.

Երկու կրակ…երկու աստված…
Օ՛, Շամիրա՛մ, ես պապիրաթղթով մերժել եմ քեզ.
Ինչո՞ւ ես վերստին հղել դեսպան…

Այո՜, Արան հայրենասեր է, նա չի կարող լքել իր հայրենիքը, իր նախնիների հողը, իր ժողովրդին և, վերջապես, իր Նուարդին: Շատ շուտով լուծվում է նրա հոգու երկվությունը: Բացահայտվում է Շամիրամի իսկական դեմքը, պատռվում է սիրո շղարշը, և ակնառու են դառնում նենգությունն ու խարդավանքը: Շամիրամը փորձում է բռնությամբ տիրել Արային, բայց, ինչպես Նուարդն է ասում, «զի սերը հակառակ է բռնության»: Այո՜, իրավամբ սխալվում է Շամիրամը, սերը չի կարելի «նվաճել սողալով»: Արան հասկանում է, որ Շամիրամն ուզում է զրկել իրեն հայրենիքից, դարձնել սիրահար մի արքա, որն ամեն վայրկյան կարող է դառնալ կանացի քմայքների ու դավադրությունների զոհը: **Հաստատակամորեն Արան ընտրում է Նուարդի սերը, գերադասում Արմավիրի խնձորենին, հայոց լեզուն, հայրենի ավանդույթները:**

Նրա մեջ հաղթում է մարդկային ամենաբարձր զգացումը՝ հայրենասիրությունը.

Վերադարձե՜ք Նինվե և ասացե՜ք Շամիրամին,
Որ բռնության շնչից սիրո ծաղիկը թառամեց,
Եվ նրա տեղ աճեց ատելության կաղնին:
Եվ ասացե՜ք, Արան սիրում է Նուարդին,
Պատրաստ է պահպանել նրա պատիվն անեղծ…

Սկսվում է ճակատամարտը: Դեմ դիմաց հայտնվում են հայոց թագավորն ու Ասորեստանի թագուհին: Ծերունի զորավար Վաշտակն առաջինն է նկատում զրահավորված Շամիրամին, որը կանգնած էր այն նույն բլրի վրա, որտեղ մի ժամանակ կանգնած է եղել գոռոզամիտ Բելը, երբ նահապետ Հայկը նետահարել է

նրան: Վաշտակը խորհուրդ է տալիս թագավորին անվրեպ նետահարել «Բելա դժխեմ ժառանգուհուն»: Արան բարձրացնում է հայկյան լայնալիճ աղեղը, բայց նույն րոպեին էլ իջեցնում.

…Ո՜չ, ո՜չ, ես չեմ նետահարի նրան…

Դա քիչ է:

Ծերունի Վաշտակը Արայի արարքը համարում է մոլորություն, որ կարող է թուլություն բերել Հայկազյան ցեղին: Արան արդարանում է՝ ասելով, թե չպետք է սպանել թշնամուն և դրանով փրկել նրան «պարտության ցավից».

Ո՜չ, ո՜չ… ես այդ բարիքը չեմ անի, Վաշտա՜կ:

…Ես կջարդեմ նրա բանակը մոլեգին մարտում,

Ես կբռնեմ նրան իբրև գերի ռազմադաշտում…

Այո՜, ոչ թե փոքրոգությունն ու թուլությունն են ղեկավարել նրան, այլ ասպետական մեծահոգությունն ու վեհանձնությունը: Հիրավի,Արան մեծահոգություն է հանդես բերում՝ հրաժարվելով նետահարել մի թույլ կնոջ: Հայոց արքան իր այս ազնիվ արարքով, իրավամբ, կարող է կանգնել Մուշեղ Մամիկոնյանի և Սասունցի Դավթի կողքին:

Արայի մեծահոգությունը գնահատում է նաև Շամիրամը: Գրավելով այն բլուրը, ուր քիչ առաջ կանգնած էր Արան, նա ասում է.

Այստեղ էր նա կանգնած… Ես պարզ տեսնում էի նրան:

Նա ինձ նշան բռնեց լայնալիճով,

Բայց նետը չարձակեց: Նեբու՛, ի՞նչ է խոկում Արան…

Դա հույսի վերջին կայծն է…Շամիրամը մինչև վերջ էլ չի կորցնում Արայի սերը նվաճելու հավատը:

Իսկ ինչպե՞ս է ավարտվում ողբերգությունը: Արան քաջաբար մարտնչում է և խոցվում Շամիրամի տարփածու Արտաբանի կողմից: Ձախջախվում են ասորական զորքերը, իսկ Շամիրամը գերի է ընկնում: Նա արդեն բարոյալքված է, ընկճված, խեղճացած: Ասորեստանի թագուհին, որ ամեն ինչ զոհել էր հանուն իր սիրո, մնում է դատարկածեռն: նա աղերսում է մեռնող Արային ասել թեկուզ մեկ բառ: Իսկ Արան արտասանում է. «Մնա՛ս բարյավ, Նուա՜րդ»: Խորտակված է ամեն ինչ:

Կատարելով Արայի վերջին կամքը՝ Նուարդը հրամայում է Վաշտակին.

Վաշտա՜կ, քանի որ Շամիրամ տիկին

Բարեհաճեց Հայոց աշխարհն ապաստանել,

Ապա վեհանձնաբար բնակեցրե՞ք նրան…

Հայոց փառքին և հյուրընկալ ոգուն վայել…

Այսպես է կամեցել… Արան:

Ինչպես տեսնում ենք, Զարյանը վերստեղծել է հայկական հնագույն վիպերգը, դուրս հանել նրա թաքցրած ճշմարտությունն ու գաղափարը, հեռավոր օրերի փայլն ու իմաստը:

Զարյանի «Արա Գեղեցիկը» իր բոցակեզ հայրենասիրությամբ, կերպարների հարազատությամբ և գեղարվեստական բարձր արժանիքներով հմայում է և դեռ կհմայի ապագա ընթերցողներին, կտանի նրանց հեռու՛ - հեռու՛ իր խոսքի կախարդական ուղիներով:

Եվ այսպես, ամփոփելով այս ստեղծագործություններում ընդգրկված բարոյական բարձր արժեքները՝ ասվածը կարելի է ներկայացնել աղյուսակով՝ ըստ կերպարների:

Հերոսներ	Արժեքներ
Արա Գեղեցիկ	• հայրենասիրություն • հավատը հայրենի հողի ու ջրի նկատմամբ • հայրենիքը անձնական սիրուց բարձր դասելը, հայրենիքը բացարձակ արժեք ընդունելը • ընտանիքին ու սիրելի կնոջը նվիրված լինելը • քաջություն • բարություն • վեհանձնություն • մեծահոգություն • մտքի սրություն • թշնամու գայթակղությանը տեղի չտալը • նախնիների ավանդներին կավատարիմ մնալը • դիմացինին օգնելու կարողություն
Նուարդ	• հոգու գեղեցկություն ու նրբություն • հայրենասիրություն

	• հայրենիքին ու ընտանիքին նվիրված լինելը • հոգեկան ծանր տվայտանքները արիությամբ ու արժանապատվությամբ հաղթահարելու կամքը • բարություն ու մեղմություն • համեստություն ու հեզություն • պատվասիրություն • իմաստություն ու խոհեմություն • հպարտություն ու ինքնասիրություն • մեծահոգություն • ազնվություն • զգայուն ներաշխարհով օժտված լինելը • մայրության ու անձնազոհության զգացում ունենալը • առաքինի լինելը • ամուսնուն սիրելու և հասկանալու կարողություն • ամուսնու մահից հետո զորքը գլխավորելու և թշնամու դեմ մղվող պայքարից հաղթանակով դուրս գալու կարողություն • ամուսնու կամքը սրբորեն կատարելու կարողություն
Արքայամայր	• նվիրվածությունը հայրենիքին ու ընտանիքին • հանուն հայրենիքի որդու վրա բարկանալու, նրան անիծելու ու պատժելու կարողություն
հայ ժողովուրդ /ներկայացուցիչներ՝ ծերունի Վաշտակ, գինեգործ Արբակ, Նանե, Վարուժան, գուսան .../	• հայրենասիրություն • խաղաղասիրություն • արդարամտություն • բռնության դեմ անողոք լինելու կարողություն • գեղեցիկը տեսնելու կարողություն • կառուցող-շինարար ոգի ունենալը • խաղաղ, ստեղծարար աշխատանքով ապրելու կարողություն • բարի ու սրտակից լինելու կարողություն

	• հյուրընկալ ոգի ունենալը • .ավանդույթները պահելու կարողություն • անսասան հավատ ու կամք ունենալը
թշնամի **/Շամիրամ/**	• փառասիրություն • ագահություն • նենգություն • .խարդախություն • չարություն • դաժանություն • տիրելու, իշխելու, ուրիշի երկիրը նվաճելու կիրք

Հաստատապես պիտի ասել, որ այս արժեհամակարգով դաստիարակվող սերունդը կպահի, կպահպանի, կշենացնի և ի չիք կդարձնի մեր դարավոր թշնամիների երազանքը:

Ու երկրագնդի այս փոքրիկ կետը, որ իրավամբ Հայաստան է կոչվում, կհավերժի և իր հաստատուն տեղը կունենա աշխարհի քարտեզի վր

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես, ամփոփելով մեր հետազոտական աշխատանքը՝ եկանք այն եզրակացության, որ սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում անգնահատելի է գրականության դերը, որը դիտվում է իբրև ազգային մշակույթի արտահայտության ու գոյաբանության բարձրագույն ձև: Գրականության դերը անհատի կյանքում արժևորվում է հենց նրանով, որ սովորեցնում է ոչ միայն ճիշտ ապրել, այլև գեղեցիկ ապրել: Իսկ գեղեցիկ ապրելու արվեստը իր սաներին պետք է ուսուցանի հենց գրականության ուսուցիչը: Այդ ուսուցիչն է, որ կարող է և պետք է սովորողների մոտ արմատավորի այն գիտակցությունը, որ թե՛ համամարդկային և թե՛ ազգային արժեքները հավիտենական են, թեև ժամանակի ընթացքում նրանք փոխում են իրենց ձևը, բայց բովանդակությունը մնում է նույնը:

Եվ ուրեմն, գրականության ուսուցչի խնդիրը պետք է լինի ժամանակի հետ կապված փոփոխական ձևերի հետևում մշտապես նշմարել մշտական ու մնայուն արժեքների գոյակերպը և զանազան ուղիներով ու միջոցներով այն սերմանել յուրաքանչյուր անհատի հոգում:

Ինչպես տեսանք, արժեհամակարգի բուրգի գագաթին գտնվող սրբագույն ու նվիրական արժեքը հայրենասիրությունն է:

Հիրավի, հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Իսկ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգում սերմանելու լավագույն միջոցը ժողովրդական բանահյուսության և նրա հենքի վրա ստեղծված գեղարվեստական բարձրարժեք գործերի ուսումնասիրությունն է:

Հենց այս ստեղծագործություններն են սովորեցնելու, դաստիարակելու նոր սերնդին, համապատասխան օրինակով ձևավորելու նրանց ազգային բնավորությունը, ազգային դիմագիծը: Այդ սերունդն է կերտելու կայուն և անկախ հայրենիք, որի համար կարևոր գրավական է ճիշտ արժեքային համակարգի ստեղծումը և պահպանումը:

Այո՛, այսօր մենք՝ ուսուցիչներս, պատասխանատու ենք մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին ու հայրենիքին նվիրված հայրենասեր անհատներ կրթելու և դաստիարակելու համար:

Եվ այսպես, անդրադառնալով ժողովրդական բանահյուսությունից մեր ընտրած թեմային, պիտի ասենք, որ այս գեղեցիկ ավանդազրույցը կհետաքրքրի նաև

հետագա սերունդներին, և նրա հիման վրա, անշուշտ, կծնվեն արվեստի հիասքանչ ստեղծագործություններ, որոնք ոչ միայն սերունդներին կհմայեն իրենց ձևի և բովանդակության ներդաշնակությամբ, իրենց գաղափարական խորությամբ ու հարստությամբ, արտահայտչամիջոցների առատությամբ ու հյութեղությամբ, այլև նրանց կկրթեն ու կդաստիարակեն այնտեղ խտացված, խոր արմատներ գցած ազգային ու համամարդկային արժեքներով :

Հենց այս արժեքներն էլ կդառնան այն հիմքը, այն հենքը, որի վրա կկերտվեն հետագա սերունդների աշխարհայացքը և արժեհամակարգը:

Համոզված ենք, որ Արայի կերպարը դարեր շարունակ կոգեշնչի մեր առաջնորդներին, կպատգամի հայրենիքը չլքելու, ամուսնական առագաստը չպղծելու, հայրենիքին ու ընտանիքին անմնացորդ նվիրվելու սուրբ օրենքը. չէ՞ որ նրանք ծնվել և ինքնացել են մի աշխարհում, ուր գործում են բարոյական բարձր արժեքները, առաքինության ու վարքի վսեմ սկզբունքները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------2
2. **Գլուխ 1**
Գրականության դերը արժեհամակարգի
ձևավորման գործում ----------4
3. **Գլուխ 2**
Արժեքային համակարգը
« Արա Գեղեցիկ և Շամիրամ » վիպերգում
և նրա մշակումներում ----------8
ա/ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգը----------9
բ/ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգի մշակումները
հայ հեղինակների կողմից /Վ.Տերյան, Ե.Չարենց/--------10
գ/ Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական
ողբերգությունը ----------13
4. Եզրակացություն ----------25
5. Բովանդակություն ----------27
6 Գրականության ցանկ ----------28

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ա.Գևորգյան, «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում», Երևան 2002
2.Վ.Կիրակոսյան, Գրականությունը 7-9-րդ դասարաններում: Մեթոդական ձեռնարկ, Երևան 2006
3. Հովհ.Թումանյան, Ընտիր երկեր, հ.2, Երևան 1985
4. Վ.Սահակյան, Ռ.Ներսիսյան «Հայ դասականների մտքի գանձարանից», Երևան 2005
5. Մ.Խորենացի, «Հայոց պատմություն» , Երևան 1981
6. Ն.Զարյան , «Երկերի ժաղավածու » , Երևան 1984
7. Ե.Չարենց, «Երկերի ժողովածու» , Երևան 1986
8. Վ.Տերյան , «Բանաստեղծություններ» , Երևան 1982
9. Ս.Դարոնյան, «Նաիրի Զարյան» , Երևան 1982